ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___ » _____ 2025թ. №_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.45/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՄԵՆ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.95/2 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Արմեն Արսենյանին սեփականության իրավունքով պատկանող Գայի պողոտայի հ.45/7 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 404.77քմ /70.0քմ+334.77քմ/ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.290820218-01-0114 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 3247.429քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.45/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՄԵՆ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.95/2 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է Արմեն Արսենյանին սեփականության իրավունքով պատկանող Գայի պողոտայի հ.45/7 հասցեում, Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 404.77քմ /70.0քմ+334.77քմ/ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.29082018-01-0114 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 3247.429 քմ մակերեսով հողամասի հետ:

Հողամասերի փոխանակության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արմեն Արսենյանին պատկանող հողամասը կից է Գայի պողոտա հ.51/7 հասցեում կառուցվող բենզալիցքավորման կայանին: Վերջինս դիմել է Գայի պողոտա հ.45/7 հասցեի հողամասում հասարակական շինության կառուցապատման հնարավոր չափորոշիչների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, սակայն նշված հասցեում գտնվող հողամասում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը հնարավոր չի համարվել, քանի որ կառուցապատում իրականացնելու դեպքում չէր պահպանվելու ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով (կետ՝ 374) սահմանված՝ հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանների և դրան հարակից տարածքների կառուցապատմանը վերաբերող պահանջները, ինչի պարագայում առաջարկվել է իրականացնել հողամասերի փոխանակություն:

Մասնագիտական որակավորում ունեցող «ՖԵՌԵ» ՍՊ ընկերության կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ Գայի պողոտայի հ.45/7 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Արմեն Արսենյանին պատկանող և Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում՝ գտնվող հողամասերի շուկայական արժեքները կազմում են համապատասխանաբար 212.706.600 ՀՀ դրամ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման

արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ